ոչ պատասխանէ նոցա, այլ միայն թէ Փրկեցաւ ի պատուհասէն։ Եւ ապայ երթային և գային ի դրունս նոցա. որք յառաջադէմն երթային, որպէս և գրեցաւ, և խոստացան վէզիրին Գ անգամ դրամով ամենայն օճախն, որ էին սիրելի նմա յոյժ թէ Հա՛ն զսեագլուխն և դարձո՛յ զտուն նոցա ի նոսա։ Եւ չեղև հնար թէ դառնայր վէզիրն ի խօսիցն, այլ մի մի բանս պատճառելով խաբէր զնոսա. և յետին բան ասէր ընդ քէհայէկն՝ Ընդ քեհեան իմ խօսեաց զբանդ. և նայ ոչ խոնարհեցաւ վասն այսմ ընդ այն և մնայր և պատասխանէր թէ Դուք ձեզէն տեսէք, մարդի՛ք։ Եւ խորհեցեալ լինէր Մարտիրոս վարդապետն իւրովքն և առաքէր առ Վարդապետն և երբեմն երթայր առ նա, և ասաց թէ Ե՛լ աստի և ապայ տեսցուք. և նա ոչ կամենայր թէ Բանն տեսանի և ապայ ելնեմ։ Եւ յաւուր միում գրեաց թուղթ թէ Ո՛վ որ կամի զիս աստի հանել՝ անէծս և այլ բանս անդէպս։ Եւ ոչ լուեալ բանից նորա Մարտիրոս վարդապետն, այլ երթեալ առ աղայսն և ասաց. Ո՛վ տեարք, կամիմ զի արձակել տացէք զեղբայրն իմ, և զայս ինչ։ Եւ ելին աղայքն ամենայն, որպէս սովորն էին՝ երթալ առ վէզիրն, և խնդրեցին արձակել։ Եւ ի դուրս նորա մի ըստակ ոչ առին՝ ոչ մեծն և ոչ փոքրաւորքն։ Եւ ելեալ եկն ի յԱստուածածին եկեղեցի, որ էր Մարտամսոյ ԻԲ (Գշ), և խնդացաք ի խնդութիւն մեծ ամենայն ազգաւ[1]։ Եւ յետ Բ աւուր տարան ի Ղալաթայ, անդ արարեալ զՍուրբ Զատիկն ի փառս աղատողին ամենայնի։

Եւ յետ աւուրց ԺԵ-ից ըմբռնելոյ Վարդապետին՝ Մարտի ԺԴ, կայաք ի դուրս վէզիրին. ետ բերել վէ-

1) ազգմբ.